«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Սաների մեջ ինքնուրույնության, նախաձեռնողականության և ստեղծագործական ունակությունների զարգացումը ոչ ավանդական նկարչության գործընթացում

Հաստատություն՝ 104 մսուր-մանկապարտեզ

Դաստիարակ՝ Արաքսի Ասոյան

Ղեկավար՝ Ժաննա Ավետիսյան

Երևան 2023

Բովանդակություն

Ներածություն---------- 3

1. Սաների մեջ ինքնուրույնության, նախաձեռնողականության և ստեղծագործական ունակությունների զարգացում---------- 5

2.Այլընտրանքային նկարչություն և Գեղագիտական դաստիարակություն---------- 12

3. Հետազոտական աշխատանք՝ ուղղված մանկապարտեզի միջին խմբի սաների ինքնուրույնության, նախաձեռնողականության և ստեղծագործական ունակությունների բացահայտմանը---------- 15

Եզրակացություն---------- 16

Գրականության ցանկ---------- 17

Ներածություն

Մանկապարտեզի պրակտիկայում կիրառվում են ժամանակակից խաղային և ակտիվ ուսուցման մեթոդներ, որոնք զարգացնում են երեխայի կարողություններն ու հմտությունները: Երեխայի խաղի մեջ խոր ստեղծագործական բովանդակություն կա: Խաղի մանկավարժական նշանակությունը ընդգծել և հետաքրքիր ու օգտակար մտքեր են արտահայտել Յա. Ա. Կոմենսկին, Ժ.-Ժ. Ռուսոն, Կ. Ուշինսկին, Ա. Մակարենկոն, Յա. Կորչակը և շատ ուրիշներ: Խաղի դաստիարակչական նշանակության ուսումնասիրությամբ զբաղվել են նաև հոգեբաններ, սոցիոլոգներ, փիլիսոփաներ, ազգագրագետներ, արվեստագետներ, որոնք հիանալի գիտեն երեխայի ներաշխարհը:

Այսպիսով, կարելի է նշել, որ որքան բարձր է նախաձեռնության զարգացման մակարդակը, այնքան ավելի բազմազան են խաղային գործունեությունը, և, հետևաբար, այնքան դինամիկ է անհատականության զարգացումը: Երեխաները հաճախ են լսում իրենց ծնողներից՝ «ձեռք մի տուր», «դեն գցիր», «մի գնա այնտեղ», «նստի՛ր այստեղ», «լռիր»: Նման պայմաններում երեխաների նախաձեռնությունը, ցավոք, չի զարգանում: Երեխայի նախաձեռնությունն առավել ակտիվորեն զարգանում է մանկապարտեզում ՝ պարապմունքների ընթացքում: Այս տարիքում մանկապարտեզում երեխաների նախաձեռնողականությունը զարգացնելու համար կիրառվում են տարբեր խաղեր և ֆիզիկական վարժություններ: Կարևոր է, որ ծնողները համագործակցեն դաստիարակների հետ , որպեսզի արդյունավետ լինի այդ գործընթացը: Մանկապարտեզի դաստիարակը պետք է կարողանա զարգացնել երեխաների ակտիվ հետաքրքրությունը , խթանի նրա նախաձեռնողականությունը՝ շրջապատող աշխարհի նկատմամբ նոր գիտելիքներ և հմտություններ ձեռք բերելու ցանկությունը իրագործելու համար: Դաստիարակը պետք է անընդհատ ընդլայնի սաներին տրվող առաջադրանքների շրջանակը՝ աստիճանաբար երեխաների համար առաջ քաշելով ավելի բարդ խնդիրներ, որոնք պահանջում են խելամտություն, ստեղծագործականություն, նոր մոտեցումների որոնում: Այսպիսով՝ ինքնուրույնությունը, նախաձեռնողականությունը և ստեղծագործականությունը երեխայի անհատականության զարգացման կարևոր գործոնն են: Որքան կարգապահ ու ակտիվ է երեխան այնքան ավելի լավ, խորը բովանդակալից է տիրապետում վարքի կանոններին, և ավելի լավ է կարողանում դրսևորել իր ինքնուրույնությունը,

բացահայտում իր միջի թաքնված ստեղծագործական ունակությունները և կարողությունները:

Աշխատանքի նպատակը: Ուսումնասիրել և ներկայացնել սաների մեջ ինքնուրույնության, նախաձեռնողականության և ստեղծագործական ունակությունների զարգացումը դիդակտիկ խաղերի կիրառմամբ:

Հետազոտական աշխատանքի նպատակից բխող խնդիրներն են.

1.Բնութագրել մանկապարտեզ հաճախող սաների ինքնուրույնության, ստեղծագործականության և նախաձեռնողականության հմտությունները

2. Դիդակտիկ նյութերի, ուսումնական խաղերի օգնությամբ նպաստել սաների ինքնուրույնության և ստեղծագործական ունակությունների զարգացմանը, իրենց գիտելիքները գործնականում կիրառելու կարողությանը:

3. Կատարել հետազոտական աշխատանք՝ սաների ինքնուրույնությունունը, ստեղծագործականությունը, նախաձեռնողականությունը ստուգելու նպատակով:

Հետազոտական աշխատանքի արդիականությունը. Թեման արդիական է, քանի որ միջավայրը, որտեղ երեխան անց է կացնում օրվա մեծ մասը, անընդհատ փոխվում է: Փոփոխվում է նաև երեխային առաջադրվող խնդիրները և դրանց լուծման եղանակները: Հետևաբար, դաստիարակը պետք է երեխային օգնի նա սովորել ինքնուրույն լուծել իր առջև դրված խնդիրները, տեսնել իր նպատակները, նախաձեռնել, ձևավորել, ստեղծել սոցիալական կապեր՝ օգտագործելով ժամանակակից դիդակտիկ տեխնոլոգիաները՝ զարգացնելու սաների ինքնուրույնությունը, նախաձեռնողականությունը, ստեղծագործական ունակությունը՝ տեսական գիտելիքները գործնական կարողությունների վերածելու համար:

1. Սաների մեջ ինքնուրույնության, նախաձեռնողականության և ստեղծագործական ունակությունների զարգացում

Մանկապարտեզի սաներին ինքնուրույնությունը եղել և մնում է ներկայիս մանկավարժության ամենահրատապ խնդիրներից մեկը: Երեխայի կամային հատկանիշները նրա բնավորության հիմնական կողմն են,այդ իսկ պատճառով պետք է լուրջ ուշադրություն դարձնել նրա դաստիարակությանը: Ինքնուրույնությունըերեխայի հետագա գործունեության զարգացման համար անհրաժեշտ կամային կարևոր հատկանիշ է: Սաները մանկապարտեզում դաստիարակության և ուսուցման գործընթացում պետք է սովորեն ինքնուրույն նպատակներ և խնդիրներ դնել, լինեն նախաձեռնող իրենց գործունեության ընթացքում,ոչ միայն կարողանան առաջադրել խնդիրներ և վարկածներ, ենթադրություններ խնդրահարույց իրավիճակների լուծման տարբերակների վերաբերյալ,այլև գտնել դրանք լուծելու համար եղանակներ՝ հաղթահարելով տարաձայնությունները: Այս խնդիրների լուծման ճանապարհին բավականին մեծ է դաստիարակի դերը: Դաստիարակի գործունեությունը պետք ուղղված լինի երեխաների նախաձեռնողականության , ինքնուրույնության և ստեղծագրծական ունակությունների զարգացմանը անձակենտրոն փոխազդեցության միջոցով: Այն ապահովվում է երեխայի անհատականության զարգացումը ու ինքնազարգացումը ՝ հիմնվելով անհատական հատկանիշների նույնականացման վրա: Դրանք դաստիարակը որոշում է համակարգված դիտարկումների միջոցով: Երեխայի անհատականությունը նա դնում է իր աշխատանքի առանցքում՝ ապահովելով նրա զարգացման հարմարավետ, հակամարտությունից զերծ և անվտանգ պայմանները՝ գիտակցելով իր բնական ներուժը: Դաստիարակի համար առաջնահերթ խնդիր է ներդաշնակ զարգացած անհատականության ձևավորումը: Մանկավարժը քաջ գիտակցում է , որ ինքնուրույնությունը երեխայի առաջատար որակներից մեկն է , որն արտահայտվում է որոշակի նպատակ դնելու, դրա իրականացմանը ինքնուրույն հասնելու ունակությամբ, սեփական գործունեության նկատմամբ պատասխանատու վերաբերմունք ցուցաբերելու և ոչ միայն գիտակցաբար, այլև ակտիվորեն գործելու ունակությամ:

Յուրաքանչյուր խմբում ինքնուրույն աշխատանքի անցկացումը ունի որոշակի առանձնահատկություններ: Մանկավարժները հաճախ կիրառում են իրենց սաների ակտիվությունը խթանող հնարներ:Այդ հնարների կիրառմամբ նրանք սովորեցնում են աշակերտներին ինքնուրույն աշխատել,բայց այն դեռ ինքնուրույն աշխատանք չէ: Ինքնուրույն աշխատանքի և ինքնուրույնության միջև գոյություն ունի սերտ կապ: Ինքնուրույն աշխատանքը մի կողմից արդեն ձեռքբերված ինքնուրույնության արտահայտումն է, մյուս կողմից՝ ինքնուրույնության զարգացմանը նպաստող միջոց:

Այսպիսով՝ ինքնուրույն աշխատանքը նպաստում է ինքնուրույնության ձևավորմանը՝ որպես անհատ որակ:Ինքնուրույն աշխատանքները զարգացնում են սովորողների տրամաբանությունը, ճանաչողությունն ու ակտիվությունը: Ինքնուրույնության բարձր մակարդակը մատնանշում է մարդու սեփական ուժերի հանդեպ վստահությունը, ինքնագիտակցության և հետևաբար, նաև հավակնությունների բավարար մակարդակի առկայությունը: Բայց նման որակը դատարկ տեղում չի ձևավորվում:Ազատությունը համարվում է ինքնուրույնության ձևավորման նախապայմանը: Որպեսզի երեխան ինքնուրույն ուսումնական գործունեություն ծավալի, նրան անհրաժեշտ է այդ հնարավորությունը տալ: Ինքնուրույնությունը կարող է ձևավորվել միմիայն համապատասխան գործունեության ընթացքում: Եթե երեխային սովորեցնում ենք պարտադրաբար, եթե նրան ուսումնական գործունեության ազատություն, սխալվելու և սեփական սխալների հիման վրա ճշմարիտ ճանապարհ դուրս գալու իրավունք չենք տալիս,երբեք նրանից ինքնուրույն մարդ չի ձևավորվի: Պարտադրանքը սպանում է մարդու մեջ աշխարհի հանդեպ ամեն մի հետքրքրություն: Ինքնուրույն ուսումնական աշխատանքներ լավագույնս կարելի է իրականացնել ուսուցման գործընթացը մասնակիորեն հետազոտական գործընթացի վերածելով: Ինքնուրույն աշխատանքները, որ կատարում է սանը մանկապարտեզում կամ տանը, պետք է ունենան իրենց մեջ հետազոտական գործունեության տարրեր և այդօրինակ գործունեության չափաբաժինը կրթության յուրաքանչյուր հաջորդ աստիճանում համապատասխան չափով ավելանա: Մանկավարժները հաճախ առարկում են, թե երեխան պատրաստ չէ ինքնուրույնության և իրեն նվիրած ազատությունը կարող է չարաշահել՝ մատնվել անգործության: Այստեղ ճշմարտության մի աննշան բաժին կա: Բայց մանկապաչտեզի

խնդիրն էլ հենց օգնելն է երեխային՝ գիտակցելու ազատության ու պատասխանատվության դիալեկտիկան: Անհերքելի ճշմարտություն է, որ ազատությունը սովորում են գնահատել ազատ ապրելու պայմաններում, մտածել, խնդիրներ հաղթահարել սովորում են դրանք լուծելով, ինքնուրույնության սովորում են նման գործունեություն իրականացնելով, ի վերջո՝ մտածել սովորում են մտածելով, ստեղծագործական գործունեության մեջ ներգրավվելով:

Հետևյալ կարողությունները բնորոշ են ինքնուրույն մտածողությանը

● Գլխավորը առանձնացնելը, Նկատելը նդհանուր օրինաչափությունը և կատարել ընդհանրացնող եզրահանգումներ,

● Տրամաբանորեն և հետևողական հիմնավորել իր գործողությունները և վերահսկել դրանք,

● Կիրառել գիտելիքները անծանոթ պայմաններում՝ երբեմն բարդացնելով՝ստեղծագործաբար, ոչ ստանդարտ մոտեցմամբ

● Ստանալ արդյունքները՝ առանց օգնության դիմելու: Տարբերակվում են սաների ինքնուրույնության 3 մակարդակ՝կրտսեր, միջին, ավագ խմբերի համար:

● 1-ին մակարդակ՝ պարզ վերարտադրողական ինքնուրույնություն: Այստեղ ինքնուրույն գործունեությունը հատկապես վառ դրսևորվում է վարժությունների կատարման ընթացքում, որոնք պահանջում ենգ գիտելիքների պարզ վերարտադրություն, երբ սաները , իմանալով կանոնները, իրենց ձեռքի տակ ունենալով պատրաստի նմուշը, ինքնուրույն լուծում են առաջադրանքները:

● 2-րդ մակարդակը անվանում են ընտրովի ինքնուրույնություն: Այստեղ ինքնուրույնությունը դրսևորվում է հետևյալ կերպ՝ սաները իրենց իմացածներից, դատողությունների օրինակներից,սահմանումներից կարողանում է ընտրել մեկը և կիրառել այն նոր առաջադրանքների ինքնուրույն կատարման գործընթացում:

● 3-րդ մակարդակը՝մասնակի-որոնողական ինքնուրույնությունն է: Այստեղ երեխան առաջադրանքների կատարման ընթացքում կիրառում է այն կարողությունները, որոնք ձեռք է բերել այլ առարկաների և այլ թեմաների ուսուցման ընթացքում:Աշակերտը կարողանում է կատարել ինքնավերահսկում և ինքնագնահատում, ինքնուրույն պլանավորում և կազմակերպում է իր ինքնուրույն գործունեությունը:

Այսպիսով, սաների մեջ ինքնուրույնություն սերմանելով նպաստում ենք նրանց ստեղծագորշական ունակությունների և տրամաբանական կարողությունների զարգացմանը: Ստեղծագործական ընդունակությունները հարկավոր է զարգացնել երեխաների մոտ սկսած ամենավաղ տարիքից: Կան կարծիքներ, որ ստեղծագործականությունը անձի բնածին հատկությունն է, որոշ երեխաների մոտ այն առկա է, որոշ երեխաների մոտ՝ ոչ: Բազմաթիվ մանկավարժական և հոգեբանական հետազոտությունների արդյունքում պարզ է դարձել,որ բնածին կարող են լինել միայն ստեղծագործական հակումները: Այդ հակումները պետք է մշտապես զարգացնել,որպեսզի դրանք դառնան ստեղծագործական մոտեցումներ և ճկուն միտք: Այս խնդրի շուրջ տեղի ունեցած գրական ուսումնասիրությունները ցույց են տվել,որ ստեղծագործականության խնդիրը տարբեր կերպ է մեկնաբանվում տարբեր հեղինակների և մասնագետների կողմից: Օր Ե, Տունիկը մեկնաբանում է. «Ստեղծագործականությունը որպես անձի ընդունակություն, մշտապես գտնվում է զարգացման գործընթացում և կախված է բազմաթիվ ներքին և արտաքին պայմաններից:

Նա առանձնացնում է ստեղծագործականության հետևյալ չափանիշները՝

- Սահուն միտք
- Ճկուն միտք
- Յուրօրինակ և օրիգինալ միտք
- Մշակված միտք

Ըստ Ն. Լեյտեսի ստեղծագործականությունը հզոր գործոն է հանդիսանում երեխայի զարգացման գործընթացում:Ստեղծագործականությունը կարելի է սահմանել այսպես՝ « Երեխայի ընդունակություն՝ ծնելու նոր գաղափարներ գործունեության այս կամ այն ոլորտում,որոնց շնորհիվ կիրականացվի առաջադրված խնդիրների էլ ավելի արդյունավետ լուծմանը»: Այս կարողունակությունը կարող է արտահայտվել երեխայի մտածողության, ընկալման, երևակայության, էմոցիաների,ինչպես նաև իր գործունեության արդյունքների մեջ:

Այսպիսով, ստեղծագործականությունը երեխայի ներքին ակտիվությունն է, որը կապված է նրա հետաքրքրությունների, բնավորության, մտածողության առանձնահատկությունների հետ:Ստեղծագործականությունը զարգացնում է

գեղագիտական ճաշակ, քննադատական, համեմետական, ճանաչողական կարողություններ,պատասխանատվության զգացում:Դրա համար այս կարողունակությունը պետք է ձևավորել մանկապարտեզի տարիքից։ Ստեղծագործականությունը երեխային հնարավորություն է տալիս ստեղծել նորը, յուրահատուկը՝ հետագայում զարգացնելու նրա ունակությունները գիտության,տեխնիկայի,արվեստի ոլորտներում, նույնիսկ առօրյա կյանքում:Ստեղծագործական գործունեությանն անհրաժեշտ բաղադրիչն ու հիմքը ստեղծագործական երևակայությունն է: Դրա համար մանկապարտեզում պետք է մեծ ուշադրություն դարձնել այս բազադրիչի բնականոն զարգացմանը։ Այս կարողունակության զարգացմանը նպաստում են խաղային տեխնոլոգիաները։Այդ խաղերին բնորոշ առանձնահատկությունը կայանում է նրանում,որ խաղային խնդիր լուծելու համար երեխայից պահանջվում է հնարամտություն,ստեղծագործական մտածողություն, ինքնատիպություն,որոնք ոչ ստանդարտ են:

Այս կարողունակությունը զարգացնելու համար դաստիարակը կարող է տանել տարաբնույթ աշխատանքներ՝.

- Բացահայտել երեխայի ստեղծագործական ներուժը
- Ուղղորդել և ծանոթացնելերեխային աշխատանքի կազմակերպման ձևերին
- Խրախուսել,մոտիվացնել,գնահատել երեխային կատարած աշխատանքի համար
- Ընտրել ճիշտ մեթոդամանկավարժական մոտեցումներ
- Ապահովել բարոյահոգեբանական և բարեկամական կայուն մթնոլորտ։ Սաներին պետք է տալ հնարավորություն ընկերների հետ համատեղ աշխատելու և ստեղծագործելու։

Այսպիսի աշխատանքների արդյունում պարապմունքը վերջիններիս համար դառնում է հրապուրիչ,հետաքրքիր,նրանք սիրով են մասնակցում դրանց ,սովորում են,ոմանք նաև սովորեցնում։Այս ամենի արդյունքում զարգանում է սովորել սովորելու կարողունակությունը։ Սաները կկարողանան ճիշտ դրսևորել իրենց կյանքի տարբեր իրավիճակներում, կհասկանան իմացածի և չիմացածի սահմանները: Այս սկզբունքները նպաստում են ոչ միայն երեխայի ստեղծագործականության զարգացմանը,թույլ են տալիս նոր կյանք մտնող և կյանքը ճանաչող անհատին լիարժեք շփման մեջ մտնել շրջապատի հետ. ձեռք բերել

կարողություններ,հմտություններ,հետաքրքրություններ և դրանք կիրառել հետագայում դպրոցում հասակակիցների և մեծահասկների հետ համտեղ շփման մեջ, այլև դրանք խթան են հանդիսանում սաների նախաձեռնողականության, ինքնուրույն աշխատելու համար: Նախաձեռնողականությունը առավել ակտիվ ձևավորվում է նախադպրոցական տարիքում՝ սկսած երեք տարվա ճգնաժամից և «ես ինքս» երևույթի առաջացումից, ամենաբարենպաստ շրջանը 3-ից 5 տարեկանն է: Այս տարիքում երեխաների նախաձեռնողականությունը դրսևորվում է տարբեր խաղերի և ֆիզիկական վարժությունների միջոցով:

Կարևոր է, որ դաստիարակը համագործակցի իր սաների հետ Նախադպրոցական տարիքի երեխաների նախաձեռնողականությունը բնական ձևով դրսևորվում է առարկաների օգնությամբ երեխաների փորձերի և բանավոր հետազոտության տեսքով, այսինքն՝ չափահասին տրվող հարցեր ուինչու՞, ինչու՞, ինչպե՞ս, որտեղից և այլն) կամ հռետորական, կարծես ինքն իրեն ուղղված: Այսպիսով նախաձեռնողականությունը այն շարժիչ ուժն է, որը ամեն մի նոր միտք առաջ է մղում դեպի իրականություն: Նախաձեռնողականությունը կարողություն է իմանալու ինչպես հաղթահարել էմոցիաները, խոչընդոտները,և դրա հետևանքով առաջացած խնդիրները ցանկացած իրավիճակում: Մանկապարտեզի յուրաքանչյուր պարապմունքի ընթացքում կարևոր է դաստիարակի տրամադրվածությունը նախաձեռնողականությամբ օժտված սաների հանդեպ: Մանկավարժն ինքը պետք է խթան հանդիսանա աշակերտների նախաձեռնողականությունը ավելի բարձր մակարդակի հասցնելու գործում,ինչպես նաև այս հատկանիշը մյուս սաների մեջ զարգացնելու գործում: Երեխան ինքն է նախաձեռնում տվյալ պարապմունքի ժամին ինչպես իրականացնի իր մտածածը՝ թեմայի շրջանակներում:Նրա նախաձեռնած միտքը պետք է ընդունելի լինի ոչ միայն իր, այլ նաև ընկերների և դաստիարակի համար: Նախաձեռնողականության զարգացման վառ օրինակ է պաստառի պատրաստումը, ծեփոնով պատկերներ՝ դրոշ, կենդանիներ ծեփելը: Երեխաների նախաձեռնողականությունը նպատակաուղղված գործունեություն է, որը նախաձեռնում է ինքը՝ երեխան՝ նպատակ ունենալով փոխել իր դիրքը հասարակության մեջ, բավարարել իր շահերն ու իրավունքները, լուծել սեփական խնդիրները, ինչպես նաև ինքնակատարելագործվել և զարգացնել: Այն դրսևորվում է

երեխաների ազատ անկախ գործունեության մեջ՝ ըստ իրենց ընտրության և հետաքրքրությունների: Դաստիարակի դիրքորոշումը պետք է լինի հստակ՝ աջակցել և խրախուսել երեխայի նախաձեռնողականությունը հուզական հաղորդակցության մեջ ումիշտ արձագանքել երեխայի՝ ընկերական ուշադրություն, աջակցություն, ջերմություն ստանալու ցանկությանը:

Երեխաների նախաձեռնողականության հինգ ուղղություն կա՝

- Ստեղծագործական նախաձեռնողականություն,
- Նախաձեռնողականությունը որպես նպատակադրում և կամային ջանք
- Ճանաչողական նախաձեռնություն- հետաքրքրասիրություն,
- Հաղորդակցական նախաձեռնություն,
- Շարժողական նախաձեռնություն:

Ստեղծագործական նախաձեռնողականություն `պատմվածքի վրա հիմնված խաղի մեջ ներգրավվելը որպես երեխայի հիմնական ստեղծագործական գործունեություն, որտեղ զարգանում է երևակայությունը և երևակայական մտածողությունը:. Նախաձեռնությունը որպես նպատակադրում և կամային ջանք ` տարբեր տեսակի արդյունավետ գործունեության մեջ ներգրավվածություն՝ նկարչություն, մոդելավորում Ճանաչողական նախաձեռնություն–հետաքրքրասիրություն փորձերի մեջ ներգրավվածություն, պարզ ճանաչողական և հետազոտական գործունեություն, որտեղ զարգացած է տարածական-ժամանակային, պատճառահետևանքային և ընդհանուր հարաբերություններ հաստատելու ունակությունը: Անհրաժեշտ պայմանների ստեղծում երեխաների համար որոշումներ կայացնելու, արտահայտելու իրենց զգացմունքներն ու մտքերը Հաղորդակցման նախաձեռնություն՝ երեխայի ներգրավվածությունը հասակակիցների հետ շփման մեջ, խոսքի հաղորդակցական գործառույթ: Շարժողական նախաձեռնություն՝ երեխայի շարժողական գործունեության տարբեր ձևերի դիտարկում: Ավագ, միջին և կրտսեր նախադպրոցական տարիքի երեխաների շարժիչ գործունեության մեջ ինքնուրույն ընտրության պայմանների ստեղծում: [1]

---

[1] 1.https://www.arlis.am/documentview.aspx?docid=21490 «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենք:
2. Ա. Ա. Մարության, Ա. Մ. Դալլաքյան «Նախադպրոցական մանկավարժություն»:
3.Ն. Մկրտչյան, «Նախադպրոցական տարիքի երեխայի խոսքի զարգացման մեթոդիկա», Երևան 2019:

2.Այլընտրանքային նկարչություն և Գեղագիտական դաստիարակություն

Նկարչությունը հատուկ կազմակերպված մանկավարժական գործընթաց է՝ ուղղված երեխայի գեղագիտական զգացումների,կյանքում և արվեստում գեղեցիկի վերաբերյալ պատկերացումների ձևավորմանը, շրջապատող իրականության հանդեպ գեղագիտական վերաբերմունքի, գեղագիտական գնահատականի ձևավորմանը:

Ստեղծագործող անձնավորությանը բնորոշ է կյանքի ակտիվ դիրքորոշում, գեղեցիկն ընկալելու, զգալու և գնահատելու ընդունակություն: Նկարչության հիմքում ընկած է մտածողության և երևակայության զարգացում:

Նկարչությունը նպաստում է երեխայի հուզական ոլորտի զարգացմանը և զգայական փորձի հարստացմանը, ակտիվացնում նրա իմացական գործունեությունը և դրդում ստեղծագործության, բացահայտում երեխայի ընդունակությունները և ձևավորում անձնային կարևոր հատկություններ:

Խնդիրները

- նկարչական ունակությունների և կարողությունների ձևավորումը,
- գունաճանաչությունը
- երևակայության զարգացումը,
- խոսքի զարգացումը,
- մտածողության զարգացում,
- մոտորիկայի զարգացում,

Նկարչական դաստիարակության հիմնական միջոցը երեխայի մշտական հաղորդակցումն է արտաքին միջավայրի և կենցաղի գեղագիտական կողմերի հետ: Ամենօրյա շփումը գեղեցիկի հետ նպաստում է երեխայի կողմից գեղեցիկի ընկալմանը, գեղեցիկի կառուցմանը, ստեղծմանը և ի վերջո՝ գեղեցիկ միջավայրում ապրելու ցանկությանը, պահանջմունքի զարգացմանը:

Բարեկիրթ միջավայրը երեխայի գեղագիտական դաստիարակության հիմնական պայմանն է և միջոցը:

Նկարչությունը մեծ խթան է մոտորիկայի զարգացմանը, որը իրենից ենթադրում է նյարդային, մկանային և ոսկրային համակարգերի զագացում՝ նպատակային, մանր,

---

4.«3-6 տարեկան երեխաների կրթական ծառայությունների կազմակերպումն այլընտրանքային մեթոդներով», Երևան 2018:

կենտրոնացված շարժումների, գործողությունների միջոցով, որոնք հիմնականում իրականացվում են ձեռքի մատների միջոցով: Եվ որքան զարգացած է մոտորիկան, այնքան անձը ավելի ճկուն է հասարակական միջավայրում, և ավելի երաշխավորված է նրա կյանքի որակի ապահովումը:

Ուղեղում բոլոր շարժումները ղեկավարող կենտրոնի 1/3-ը զբաղեցնում է մանր շարժողականության կենտրոնը: Գիտության կողմից հաստատված այս փաստը թույլ է տալիս ձեռքի դաստակը դիտարկել որպես«խոսքի օրգան», որի մարզումն ու վարժեցումը նույնքան կարևոր դեր է խաղում երեխայի խոսքի զարգացման գործընթացում, որքան հնչարտաբերական ապարատը:

Մանկական նկարչությունը պատմում է երեխայի զարգացման ընթացքի, նրա հուզական , մտավոր, ֆիզիկական փորձառության մասին: Մանկական նկարչությունը անցնում է զարգացման իր յուրահատուկ փուլերը, որոնք համամարդկային և համընդհանուր են, իսկ այդ փուլերից շեղումները կարող են հուշել երեխայի զարգացման բնականոն ընթացքի խաթարումների մասին:

Մանկական նկարներում յուրահատուկ կերպով արտացոլվում է երեխայի հոգեբանական զարգացումը: Օրինակ, կրտսեր նախադպրոցական տարիքում երեխաները կոնկրետ բաներ դեռևս չեն նկարում. նրանք չունեն դրա համար ֆիզիկական, մտավոր համապատասխան ունակություններ: Նրանք նկարում են պարզ, ոչ կոնկրետ պատկերներ, հիմնականում իզոլացված պատկերներ: Այսպես, այս տարքիում երեխաները գրեթե չեն նկարում մի քանի մարդ կամ մի քանի կենդանի մի նկարում: Նրանց նկարները պատմում են մեկ կերպարի մասին: Նման իզոլացվածությունը ոչ թե երեխայի միայնության նշան է, այլ այդ տարիքին հատուկ էգոցենտրիզմի վառ դրսևորում: Իսկ ահա կրտսեր դպրոցական տարիքից սկսած երեխան արդեն սկսում է նկարել մարդկանց խմբավորումներ, քանի որ երեխան մուտք է գործում ավելի մեծ խումբ և սովորում է համագործակցել և խմբային աշխատել:

Մանկական նկարները երկար ժամանակ է, ինչ հետաքրքրում են հոգեբաններին, քանի որ դրանք հանդիսանում են երեխայի հոգեբանական առանձնահատկությունների ուսումնասիրման միջոց: Կան հատուկ մշակված բազմաթիվ պրոյեկտիվ թեստեր, որոնք թույլ են տալիս ուսումնասիրել այս կամ այն

անհատական առանձնահատկությունը նկարչության միջոցով: Եվ դրանք մեկնաբանվում են ըստ որոշակի չափանիշների:

Իսկ մեր առօրյա կյանքում ակնհայտ է,որ երեխաները շատ սիրում են նկարել: Նրանց համար նկարչությունը յուրահատուկ լեզու է: Բոլոր երեխաները ունեն նկարելու ձգտում. դա նրանց համար ոչ թե արվեստ է, այլ խոսք: Նկարչության միջոցով երեխան կարողանում է արտահայտվել, այն ինքնաբուխ է, չի պահանջում կամային և ինտելեկտուալ ջանքեր: Այն իր բնույթով նման է խաղին և հետևաբար երեխայի համար արտահայտվելու, դրսևորվելու առավել հետաքրքիր, հաճելի և բնական տարբերակ է:

Երեխայի կողմից շրջապատի գիտակցումը ավելի արագ է տեղի ունենում, քան բառապաշարի զարգացումը: Իսկ նկարչությունը առավել հեշտ տարբերակն է արտահայտելու այն, ինչ երեխան գիտի իր շրջապատի մասին, այն, ինչ զգում է: Այսինքն, նկարչությունը լրացնում է բացակայող բառերը, լրացնում է խոսքը:

Բացի դա նկարչությունը զարգացնող դեր ունի երեխայի համար: Կապված լինելով ձեռքի աշխատանքի հետ՝ նկարչությունը ձեռքը վերածում է խոսքի օրգանի: Նկարչությունը զարգացնող դեր ունի նաև տեսողության, շարժողական կոորդինացիայի, խոսքի, մտածողության, երևակայության համար: Այն նաև համաձայնեցնում է միջկիսագնդային փոխազդեցությունը:

Այսպիսով, մանկական նկարները մասնագետների համար կարող են ծառայել որպես ախտորոշիչ և թերապևտիկ միջոց,իսկ առօրյա կյանքում նկարչությունը նպաստում է երեխայի ընդհանուր զրգացմանը: Մանկական նկարները յուրահատուկ պատմություններ են երեխայի զարգացման, հուզական վիճակի, ընդհանուր հոգեբանական վիճակի մասին: Եվ անշուշտ նկարչությունը պետք է լինի երեխայի առօրյա զբաղմունքների ցանկում[2]

[2] 1.https://www.arlis.am/documentview.aspx?docid=21490 «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենք:
2. Ա. Ա. Մարության, Ա. Մ. Դալլաքյան «Նախադպրոցական մանկավարժություն»:
3.Ն. Մկրտչյան, «Նախադպրոցական տարիքի երեխայի խոսքի զարգացման մեթոդիկա», Երևան 2019:
4.«3-6 տարեկան երեխաների կրթական ծառայությունների կազմակերպումն այլընտրանքային մեթոդներով», Երևան 2018:

3. Հետազոտական աշխատանք՝ ուղղված մանկապարտեզի միջին խմբի սաների ինքնուրույնության, նախաձեռնողականության և ստեղծագործական ունակությունների բացահայտմանը

Ուսումնասիրությունն իրականացվել է թիվ 104 մսուր-մանկապարտեզ ում թվով 30 սաների հետ՝ 16 տղա, 14 աղջիկ: Հետազոտության համար ընտրել ենք Տ.Ս. Կոմարովայի «Ամբողջացնել կիսաշրջանը մեթոդիկան: Աշխատանքի նպատակն է սաների ինքնուրույնության, նախաձեռնողականության և ստեղծագործական ունակությունների աստիճանը գնահատումը: Աշխատանքը կատարելու համար երեխաներին տրամադրել ենք թերթիկներ , որոնց վրա գծագրված էր կիսաշրջաններ ուտրամագիծը 4,5 սմ): Երեխաներին առաջարկվում է լրացնել կիսաշրջանը և մտածել թե իրենց պատկերացումներով ինչ կարող է լինել յուրաքանչյուր շրջանի մեջ: Առաջադրանքը կատարած երեխաների արդյունքները գնահատվել են 3 բալանոց համակարգով 3 միավոր բարձր մակարդակ – տրվում է այն երեխաներին, ովքեր տալիս են ինքնատիպ բովանդակությամբ պատասխան՝ հիմնականում առանց կրկնության: 2 միավոր միջին մակարդակ – տրվում է այն երեխաներին, ովքեր տալիս են յուրօրինակ բովանդակությամբ պատասխան, սակայն երբեմն դրանք կրկնվում են ուօրինակ՝ ծաղիկ կամ սար) կամ առօրյայումշատ հաճախ հանդիպող առարկաներ ուգնդակ,արև և այլն): 1 միավոր ցածր մակարդակ – տրվում է նրանց, ովքեր չեն կարողացել տալ ստեղծագործ պատասխան: Բոլոր շրջանակներըմնացել են կիսատ, աշխատանքը կատարվել է անփույթ կերպով և չի ավարտվել:

Հետազոտության արդյունքում պազ դարձավ, որ 30 սաներից 12-ը ունեին ինքնուրույնության, նախաձեռնողականության և ստեղծագործական ունակության բարձր մակարդակ: Այս նախադպրոցականները ցույց տվեցին, որ կարող են պլանավորել խաղային առաջադրանքներ և իրականացնել դրանք առանց դաստիարակի օգնության: Սաներից 13-ը ունեին միջին մակարդակ: Այդ երեխաները թերանում էին աշխատանքը կատարելիս: Նրանք չգիտեին ինչպես պլանավորեն հետագա քայլերը: Սաներից 5-ը ոնեին ինքնուրույնության, նախաձեռնողականության և ստեղծագործական ունակության ցածր մակարդակ: նախընտրում են անհատական խաղեր. նախաձեռնողականություն չեն ցուցաբերում կոլեկտիվ խաղերի ընթացքում:

Եզրակացություն

Այսպիսով ինքնուրունությունը, նախաձեռնողականությունն և ստեղծագործական ունակությունները հատկանիշներ են, որոնք պետք է անընդհատ զարգացնել մանկապարտեզի սաների մոտ: Սաների ինքնուրույնությունը զարգանում է աստիճանաբար՝ ցածր խմբից մինչև ավագ խումբ: Դաստիարակի համար առաջնահերթ խնդիր է ներդաշնակ զարգացած անհատականության ձևավորումը: Մանկավարժը քաջ գիտակցում է, որ ինքնուրույնությունը երեխայի առաջատար որակներից մեկն է, որն արտահայտվում է որոշակի նպատակ դնելու, դրա իրականացմանը ինքնուրույն հասնելու ունակությամբ, սեփական գործունեության նկատմամբ պատասխանատու վերաբերմունք ցուցաբերելու և ոչ միայն գիտակցաբար, այլև ակտիվորեն գործելու ունակությամբ: Այսպիսով՝ ուսումնասիրության արդյունքում հանգեցինք հետևյալ եզրակացությանը՝ Ինքնուրույնություն սերմանելով նպաստում ենք նրանց ստեղծագործական ունակությունների և տրամաբանական կարողությունների զարգացմանը: Ինքնուրույն աշխատանքը նպաստում է ինքնուրույնության ձևավորմանը՝ որպես անհատ որակ:Ինքնուրույն աշխատանքները զարգացնում են սովորողների տրամաբանությունը, ճանաչողությունն ու ակտիվությունը: Ստեղծագործականությունը երեխայի ներքին ակտիվությունն է, որը կապված է նրա հետաքրքրությունների, բնավորության, մտածողության առանձնահատկությունների հետ: Ստեղծագործականությունը զարգացնում է գեղագիտական ճաշակ, քննադատական, համեմետական, ճանաչողական կարողություններ,պատասխանատվության զգացում: Նախաձեռնողականությունը այն շարժիչ ուժն է, որը ամեն մի նոր միտք առաջ է մղում դեպի իրականություն: Նախաձեռնողականությունը կարողություն է իմանալու ինչպես հաղթահարել էմոցիաները, խոչընդոտները,և դրա հետևանքով առաջացած խնդիրները ցանկացած իրավիճակում:Մանկապարտեզի յուրաքանչյուր պարապմունքի ընթացքում կարևոր է դաստիարակի տրամադրվածությունը նախաձեռնողականությամբ օժտված սաների հանդեպ: Այս բացահայտումների հիման վրա կարելի է նաև եզրակացնել , որ եթե երեխան օժտված է ինքնուրույնությամբ և ստեղծագործականությամբ, կարելի է ասել որ արդեն նաև նախաձեռնող է:

Օգտագործված գրականության ցանկ

1.https://www.arlis.am/documentview.aspx?docid=21490 «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենք:

2. Ա. Ա. Մարության, Ա. Մ. Դալլաքյան «Նախադպրոցական մանկավարժություն»:

3.Ն. Մկրտչյան, «Նախադպրոցական տարիքի երեխայի խոսքի զարգացման մեթոդիկա», Երևան 2019:

4.«3-6 տարեկան երեխաների կրթական ծառայությունների կազմակերպումն այլընտրանքային մեթոդներով», Երևան 2018:

5. Л. С. Выготский «Мышление и речь», Москва 1934.

6. В. И. Яшина, М. М. Алексеева,«Теориа и методика развития речи детей».